ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 461 - Ա 18 նոյեմբերի 2019 թ.

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 161-րդ, 163-րդ, 164-րդ, 167-րդ, 169-րդ հոդվածների, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1287-Ն որոշման 1-ին կետի 2) ենթակետն, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի նոյեմբերի 5-ի N 487 որոշման 1-ին կետի բ) ենթակետն ու Սևակ Խլղաթյանի դիմումը

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանին տրամադրել 2017-2018 թվականի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի չօգտագործած մասը՝ 2019 թվականի նոյեմբերի 18-ից դեկտեմբերի 19-ը ներառյալ /24 աշխատանքային օր/:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պարտականությունները 2019 թվականի նոյեմբերի 18-ից դեկտեմբերի 19-ը ներառյալ դնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ Ալբերտ Աղեկյանի վրա:

3.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության

հաշվապահական հաշվառման բաժնին սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:

4. Սևակ Խլղաթյանին աշխատանքի մեջ համարել 2019 թվականի դեկտեմբերի 20-ին:

18.11.2019

ՄԱՐԶՊԵՏ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
Քննարկեց: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
Ք.Գավառ